խապէս մաքրուեն «կոմունիստական աղտե-
ռից» եւ ապա, իբրեւ սովորական քաղաքացի-
ներ, կրեն իրենց համար սահմանուած պատի-
ժը...

Եւ երբ այս ամէնի հեղինակը, Մուսոլի-
նին, պատրաստակամութիւն յայտնեց ճանա-
չելու Խորհուրդների իշխանութիւնը Ռուսաս-
տանում, ի՞նչ էք կարծում, բոլշեւիկները նող-
կանքով երե՞ս դարձրին նրանից, կամ դոնէ
այս առթիւ յիշեցի՞ն, որ իրենք աշխարհի ա-
ռաջ ուխտ են արել յարաբերութիւնների մէջ
չմտնել բուրժուական — եւ այն էլ ի՞նչ բուր-
ժուական — կառավարութիւնների հետ...
Պատասխանը յայտնի է ընթերցողին:

Յիշե՞նք նաեւ այն աննկարագրելի ոգե-
ւորութիւնը, որ պատել էր բոլշեւիկներին,
երբ անգլիական «սոցիալ-պատրիոտների»
պարագլուխ Մակդոնալդը եւ Ֆրանսական
«կապիտալիստների լաքէյ» Հերիոն Անգլիայի
եւ Ֆրանսայի կառավարութիւնների անունից
ճանաչեցին Խորհրդային իշխանութիւնը: Այս
կառավարութիւնների հետ դիւանագիտական
յարաբերութիւններ հաստատելը բոլշեւիկները
իբրեւ քաղաքական խոշոր յաղթանակներ էին
ներկայացնում միամիտներին. մինչդեռ դա
մի խայտառակ պարտութիւն էր իրենց համար,
որովհետեւ իրենք էին նշանաբան դարձրել,
թէ որեւէ գործ չպէտք է ունենալ բուրժուա-
կան կառավարութիւնների հետ...

Աւելի՛ եւս անփառունակ է այս նշանա-
բանի յետագայ պատմութիւնը:

Բուրժուական կառավարութիւնները, որ
դանդաղ ներքին եւ արտաքին պատճառներով
սկզբում, չնայած բոլշեւիկների յոխորտանք-
ներին եւ պոռոտախօսութիւններին, դոնէ երե-
ւոյթապէս, վերապահ կեցուածք ունէին Խոր-
հրդային իշխանութեան հանդէպ՝ վերջին
ժամանակներս բացարձակ արհամարհանքով
են վերաբերւում նրան: Անգլ. կառավարու-
թիւնը, որի նրբութիւնն ու շրջանկատութիւնը
դիւանագիտական յարաբերութիւնների մէջ
յայտնի է աշխարհին՝ խզեց իր քաղաքական
կապերը Խորհրդային իշխանութեան հետ կա-
տարեալ անպատկառութեամբ: Ֆրանսական
կառավարութիւնը խզեց այդ իշխանութեան
դեսպանին Ֆրանսայից՝ առանց իսկ հաշուի
առնելու թէ դրանով ի՞նչ. ծանր վիրաւորանք
է հասցնում նրա պատուին: Անդամ Լեհաստա-
նի, Լիտվանիայի եւ Էստոնիայի կառավարու-
թիւնները, չնայած իրենց համեմատական տը-
կարութեանը, երբ խօսքը Խորհրդային իշխա-
նութեան է վերաբերում, շատ յաճախ զանց են
առնում պատշաճութեան կանոնները: Եւ իշ-
խանութեան տիրացած բոլշեւիկները, որոնք
տասը տարի առաջ բուրժուական կառավարու-
թիւններին ասպարէզ կարդալու նշանաբանով
էին աքլորանում ժողովրդական զանգուածնե-
րի առաջ՝ այսօր լուռ ու մունջ կրում են ա-
մէն վիրաւորանք, ամէն ստորացում, միայն
թէ, միայն թէ այդ կառավարութիւնները չա-
բունակեն ճանաչել իրենց իշխանութիւնը...

* * *

Նուազ ողբալի վիճակի մէջ չէ եւ գաղտ-
նի դիւանագիտութիւնը վերացնելու նշանա-
բանը: Վերջինս, ինչպէս յայտնի է, յստակօ-
րէն ձեւակերպուած եւ հանրային սեփական-
ութիւն էր դարձած դեռ Փետրուարեան Յեղ-
ափոխութեան ժամանակ: Նրա մասին որեւէ
տարակարծութիւն չկար ռուսական դեմոկրա-
տիայի մէջ: Ամէնքն էլ համաձայն էին, որ,
պատերազմը հաշուեյարդարի ենթարկելուն
պէս, գաղտնի դիւանագիտութեան չարիքը
արմատախիլ պէտք է արուէր դոնէ Ռուսաս-
տանի արտաքին քաղաքականութեան միջից:

Բոլշեւիկները Փետրուարեան Յեղափո-
խութիւնից սեփականացնելով այս նշանաբա-
նը՝ հոկտեմբերեան յեղաշրջման օրերին հրա-
հրում էին արտակարգ թափով: «Թող կորչի
գաղտնի դիւանագիտութիւնը» գոչում էին նը-
րանք բոլոր անկիւններում եւ հրապարակներ-
ում: «Ոչ մի գաղտնի բանակցութիւն, ոչ մի
գաղտնի դաշնագիր» մակագրում էին նրանք
իրենց դրօշակների վրայ՝ ժողովրդական ցոյ-
ցեր կազմակերպելիս: Եւ, ի գործադրութիւն
այս նշանաբանի, նրանք, դոնէ երեւոյթապէս,
պահանջում էին Բրեստ-Լիտովսկում՝ գերմա-
նացիներից եւ նրանց զինակիցներից, Ռիգա-
յում՝ լեհացիներից, իսկ Կիեւում՝ Սկորոպա-
դսկիի ներկայացուցիչներից, որ հաշուե-
թեան բանակցութիւնները հրապարակօրէն լի-
նին, որ կնքուելիք դաշնագրերի սկզբունքներն
ու յօդուածները բաց նիստերում, հանրութեան